ներ։ Եւ կայր ուրեմն եկեղեցի Հայոց եւ ուսած
քահանայք եւ դիտուն, համեղաձայն վար-
պետք· եւ վարդապետ մի Մաղաքիայ տե- 130
դացի, եւ Եճ հայի տուն· բայց ասին թէ յա-
ուաջն հազար խանայ էր, զոր ճէլալիքն ցրվել
են, զոյս կորուսել։ Ունի եւ արվեստաւորս
ազգի ազգի· եւ բոլոր քաղաքով երթայր մեծ
գետ Խազովան· եւ այս Խազովաս խիստ բա- 135
րելի եւ լաւ երկիր է, երկու կողմանց լեռն է,
եւ միջովն երթայ գետն։ Եւ այս լերանց վրայ
երկու գիհաց երեքտակ գեղօրայք են՝ հայու,
հոռմի, տաճկի։ Եւ կայր վանք մի Հայոց՝
Սուրբ Անտոն եւ առաջնորդն պարոնտէր 140
Եղիայ· եւ հուլ քաղաքին վանք մի այլ սուրբ
Անարծաթ, Քէմէր կ'ասեն, հին եւ աւեր, զոր
այժմ նորոգել էին։ Եւ միւս կողմն քաղաքին
Կոմանայ, ուր գերեզման է Յոհանու Ոսկերե-
բանի, բայց չկարցայ ես անդ գնալ։ Եւ էր 145
յայնժամ յոյժ սղութիւն, զի մէկ քիլա գարին
Ծ դրամ հազիւ գտանէին· եւ ի դառնալս
ժժնութիւն էր խիստ, որ քիլան հինգ դրամ
իջաւ· փառք Աստուծոյ։

ՍԵԲԱՍՏԻԱ

Անտի օրուկէսն եկաք ի թագաւորանիստ
փայլեթախտն ՍԵԲԱՍՏԻԱ եւ ԱՐԴՕԽ օվան,
որ է Ալթուն օվայ։ Մեծամեծ եւ սքիս գեղեր
տեսաք, բայց ամէնն աւեր· միայն Զիֆլիկն
տասն տուն հայի գտաք եւ ի Պօլիս· հազար 5

143 յայժմ։ — 144 կոմանայ։ ոսկերերանի։
2 Սէբաստիայ։